

ԺԹ. ՏԵՐ ՅԱԿՈԲ ՄԱՐԳԱՐԵԱՆ ԱՄԴԵՑԻ,

ՆՈՒԻՐԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ԴԵՍՊԱՆ,

(Տես Ծ. յ' էջ 544)

ԱՒԵԼԻ քան զվերոյիշեալ եպիսկոպոսներն հետաքննութեան արժանի անձ մ'է սա, և թէ իր գործովք յայտնի կամ անյայտ, խորհրդաւոր և զաղտուկ կերպարանք մի կ'երեւցընէ, և կարծեմ թէ իր ատենն ալ այնպէս երեւած է ոմանց և կասկածելի եղած, ինչպէս գուշակուի իր վրայօք մնացեալ քիչ կամ անկատար յիշատակներէն, որոց եթէ թիւն աւելնայ, անշուշտ պատմական նշանաւոր անձ մի պիտի յայտնուի ԺՉ զարու վերջ և ի սկիզբն ԺԼԻ, արեւելից և արեւմտից միջնորդ կամ ներգործող փառաւորական ժաւմանակի միջոց ծանօթ է Յակոբ, ի դիւանական կամ նստարական գրուածս Վենետիկոյ. հայրենեօք Ամիեցի (Տիարպէքիւրցի) վկայեալ, ցեղով՝ Մարգարեան կամ Մարգարի որդի, և պաշտօնով կամ վիճակաւ Արքեպիսկոպոս կամ Նոռիական կաթողիկոսին Էջմիածնի Զայս ամէնն բովանդակէ հնազոյն յիշատակաց (1593, մայիս 26), նստար մի. Il Molto Reverendo (մեծարգոյ) Giacomo Marcara di Caramit, Armeno, Vicario Generale del Reverendissimo Patriarca dell'Armenia Maggiore. գրեթէ միշտ այսպէս յիշուի յիտալական գրուածս, և յայտնուի որ շատ անգամ եկեր գացեր է, ոչ միայն ի Վենետիկ, այլ և ի Հռոմ, և ի Գերմանիա, հաւանօրէն նաեւ ուրիշ արեւմտեան Եւրոպիոյ աշխարհները, ոչ հասարակ նուիրակի մի պէս, այլ և իբր երեսփոխան և գործակատար, նոյնպէս ալ եղած է Վրաց և Պարսից թագաւորաց առ արեւմտեայս, և ասոնցմէ առ նոյնս Արեւելից նկատմամբ նշանաւոր է ժամանակն Շահ Աբասայ Թագաւորութեան, անով և Վրաց, նոյնպէս մեր կաթողիկոսաց ալ շփոթութեանց, Դաւթի Եի և իր նոր աթոռակից Մելքիսեդեկի:

Առաջին ծանօթ կամ հնազոյն յիշատակին մէջ Յակովբ ի Վենետիկ՝ իր տեղ գործակալ կը գնէ՝ նստարի առջեւ՝ իր հայրենակից (Ամիեցի) մի, Գաւսպար Տէրվիշեան, որ պահանջէ Զաքարիայի որդի Տէր Յովհաննէսէ՝ 100 դուկատը, զոր Պալլին Վենետաց (անշուշտ ի Կ. Պօլիս) առեր էր

անոր որ հասցընէ առ կաթողիկոսն, Այս գործակալութեան վկայ կ'ըլլան Գեորգ արդէն մեզի ծանօթ Տնպահն Հայոց որ և թարգման (տես Բազմ. Ե. 553), քանի մի Անկիւրացիք (Լամի որդի Լամէնտի կամ Լեֆէնտի, և իր որդին Լեֆէնտի, Աստատոս Բ. Սիմեոնի) և Մէլիքչան Բ. Մուրատի: — Քանի մ'որ վերջը (29 մայիս, 1593) զնոյն Գեորգ Տնպահն գործակալ կը կարգէ նոյն նօտարին գրութեամբ, որ պահանջէ ի Հ. Սահակայ՝ ինչ որ կաթողիկոսին կը պատշաճէր: Այս բանիս վկայ կ'ըլլայ Գարագաշ Բ. Մուրատայ՝ մեկանուամբ կամ հայրենեօք՝ d'Arpiez գրուած, Այս անունս ստուգելն այնքան հետաքննելի չէ որքան գիտնալն թէ ո՛վ էին այն Տէր Յովհաննէսն Զաքարեան և այն Հ. Սահակն, որոց քով կային կաթողիկոսական առնելիք. թերեւս նուիրակք էին կամ առանձին գործոց համար ղրկուածք. և որոց և իրենց նմանեաց (եթէ կային) վերադոյն կաթողիկոսական երեսփոխան էր Յակոբ: Զաքարիա՝ քահանայի որդի՝ ինքն ալ կամ նոյնպէս աշխարհիկ երէց մի էր կամ վարդապետ, իսկ Սահակ՝ կամ Էջմիածնի կամ ուրիշ վանքի մի միաբան. վասն զի ուրիշ նօտար մ'ալ տարի մի վերջ՝ կ'անուանէ զնա կրօնաւոր ի կարգէ Ս. Անտոնի (hordinis S. Antonij)՝ ամէն Հայ կրօնաւորք կամ Անտոնեան կամ Բարսեղեան կը կոչուին յարեւմտեայց: Այս Սահակայ երկրորդ ծանօթութիւնն եղած է ի 24 ապրիլի 1594, վերոյիշեալ գործոյ նման. Տէր Յակովբ ի վենետկոյ դառնալ ուղեւով իր երկիրը, զարձեալ զԳեորգ Տնպահ իրեն գործակալ կը կարգէ, պահանջելու և ընդունելու իր առնելիքն՝ ի Հ. Սահակայ: Այս գործակալութեան միակ Հայ վկայ կ'ըլլայ Համի Օհան Յարաշեհի որդի, զուցէ Անկիւրացի: — Ահա այս գործէս տասն օր վերջ է (մայիս 4) որ ՝ Աւետիք եպիսկոպոսի քով գտուած ներք կ'ընդունի Յակովբ ի Կարապետէ, ինչպէս յիշեցինք առաջ (տես Բազմ. Ե. 552):

Անտարակոյս է Յակովբայ քիչ աստենէն ելնելն ի վենետկոյ, իր նուիրակութեան և ղեսպանութեան գործոց համար. այլ անկէ ետեւ երեք տարի ո՛ւր երթալն և գալն և գործելն յայտնի չէ ինձ. յետ երեք տարւոյ (1597) նորէն կ'երեւի ի վենետիկ, ի Հոռով երթալու համար, ի կողմանէ Վրաց թագաւորին կամ իշխանաց, առ Ս. Պապն: — Ի՞նչ բանի համար. նոյն իսկ վենետկոյ Դուքսն կը փափաղէր իմանալ, և յանձնեց տէրութեան Դպրապետին՝ ճարտարութեամբ հետաքննել: Օր մի (22—3 յունիսի) որ Յակովբ եկեր էր ի պալատն՝ ընդունելու իրեն շնորհուած 50 զուկաւոր, (յայտ կ'ըլլայ որ վենետաց տէրութեան համար ալ ծառայութիւն մ'ըրած էր), հարցուց ասոր պաշտօնեայն իր ճամբորդութեան վրայօք. նա զգուշութեամբ խօսեցաւ (mostRANDOSI nel parlare molto riservato). Վեց ամիս կայ, բաւ, որ ելայ Գաղուիւնէ, թաղաւորէն (Շահ Աբասայ) ղրկուած. եկայ ի Tecbis առ Աղեքսանդր և Սիմոն իշխանս Վրաց, այս տեղս իրենց է Գաղուիւնէն երկու օրուան ճամբայ (*). ասոնք ալ թուղթեր տուին առ Պապն տանելու, նաեւ առ զնա.

(*) Այս տեղս Թէպրիզ կամ Դավրէժ պիտի ըլլայ, ըստ հեռաւորութեան չա-

պան Կայսերն ի Հռոմ, բայց ասոր գրուած թուղթն ալ Պապին թղթոյն մէջ գրին. ասոնց գրուած թուղթեր ալ ունիմ նաեւ ի պատրիարքէն Վրաց, զոր պէտք է տամ և սպասեմ պատասխանին: Ուրիշ անգամ ալ ասոնցմէ և Սանգա՝ Սեւերինայի կարդինալէն թուղթեր տարած եմ առ Շահն և առ իշխանս և պատրիարքն Վրաց. բայց որովհետեւ իտալերէն գրուած չէին՝ չկարցան հասկընալ, և աղաչեցին որ Պապն պարսկերէն գրել տայ, և աղօթք ընէ՝ որ կարենան թշնամոյն գէմ երթալ. միանգամայն և կը սպասեն՝ որ աւրեմտեայք նախ յաղթուիին մի ընեն, որ իրենք ալ վստահանան: Ի Հռոմ իմ թարգմանս է Յակոբ անուամբ Հայ մի, իսկ բնակութիւնս վերոյիշեալ կարդինալին քով, ուր ուրիշ անգամ ալ բնակեր եմ: Շահ Աբասայ համար ըսաւ որ 26 տարուան է, մանչ մի և փոքրիկ աղջիկ մ'ունի. 80000 ձիաւոր ունի, բայց ոչ հրացանաւոր: Սիմն վրացին կարիճ մարդ է 45 տարուան, որդի մ'ունի 25 տարուան, շատ զօրաւոր, (di gran virtù). 40,000 հետեւակ կըրնան ունենալ, բայց ոչ ձիաւոր, հրացանաւոր ալ ունին. այս վրացիք՝ Պարսից պէս ճերմակ գլխապատ ունին, ականջնին ալ սղեր, կուծքերուն վրայ մեծկակ խաչ մի: — Վրաստանէն եկալ ի Վան, անկէ ի Հալէպ, փաղտակ լրտեսի մի առաջնորդութեամբ ի Հալէպ ներկայացայ Վերետոյ Գունցին, ռուսից ընդունեցայ պաշար և ստակ, և ցամքով ու ծովով հասայ ի քաղաքս. նոյնպէս այս տեղ մաքսապետն պաշար տուաւ ինձ, և այս իրիկուն ճամբայ կ'եննմ երթալու ի Հռոմ: — Այս քիչ շատ ըսածներէն կ'իմացուի Յակովբայ դեսպանութեանց կամ նուիրակութեանց պատճառն, աւելի քաղաքական քան կրօնական:

Ըսածին համեմատ եթէ յունիսի 23ին (1597) մեկնած է ի Վենետիկ, բաւական երկար ատեն ալ բնակեր է ի Հռոմ: Վասն զի ունիմք ժամագիրք մի յետ և առաջ գրուած իր ձեռք. ուր կը գրէ յաջորդ տարին 1598, և բաւական կը ծանօթացընէ Տէրպապա ըլլալը. « Գրեցաւ ժամագիրս ի թվին » Հայոց Ռիթէ, ապրիլ ամսոյ Ա. աւարտս (աւարտեցաւ) ի մայրաքաղաքն ի » մեծն Հռոմ, ի հայրապետութեան սուրբ փափին Գլէմէնդ Ալբուլ (Otavo, Ութերորդ). ի ժամանակն Կարտինալ Սանդայ Սեւերենին ձեռամբ » անարժան և մեղօր Հայթեցի Յակոբ երիցաս, որ միայն զանունս ունիմ » և ոչ զգործս բարիս. յիշատակ ինձ և ծնողին իմոյ Եղիսին, և հօրն իմոյ » Տէր Մարգարիտ, և որդոյն իմոյ Եղիսայ սարկօսապին, և եղբօրն իմոյ Պաղ » տասարին, և կողակցին իմոյ և ամենայն յարեան մերձաւորացն՝ որք փո » խեցան ի Քրիստոս: Արդ աղաչեմ զձեզ սուրբ քահանայք և սարկօսապունք » որ չմեղադարէք սղակ(ա)նեաց զրոյս, զի ի բերանէ 'ի մտաց զրեցի, և ոչ » յօրինակօ: Արդ որք ժամ ասէք սոյլ կամ յօրինակէք, թե թերի կայ » լցէք. և ինձ մի բերան: Աստուած — որդրմի ասէք, և Աստուած ձեզ և » մեզ որդրմեացի: Հայր մեր » — Անմիջապէս ասկէ ետեւ կը գրէ. « Յիշա » փուն. բայց իրենց տեղն աւելի թիֆլիզ յարմար էր ըլլալ քան թեղապիս, ինչպէս գրուած է Կրպարէն:

» տակ է ժամագիրքս Հայոց ժամատան ի մայրաքաղաքն Վանստիկ. ամէն » :
 Յայտ է որ ինքն թողած է իր ձեռագիրքը Հայոց եկեղեցատան, բայց ոչ այս
 անգամ Հռովմէն դարձած ատեն, այլ յետոյ, թէ և ստոյգ է վերը յիշեալ
 Թուականէն (ապրիլ, 1598) տարի մի վերջը ի վենետիկ գտուիլն, մայիսի
 7ին, 1599 :

Այս մէկ տարուան միջոցին Յակովբ (անշուշտ բերած թղթոց պատաս-
 խանները տանելով) դարձեր էր յարեւելք, ինչպէս այս ետքի յիշած օրը՝
 ի վենետիկ նստարի առջեւ վկայեցին իր երկու հայրենակիցքն Միքայա որդի
 Աղաճանի և Գասպար որդի Տէրվիշի : Այս ետքինիս Լաթփի որդւոյն հետ՝
 Տէր Յակոբ դացեր էր ի Վրաստան՝ առ իշխանն Սիմոն, և անկէց թուղթեր
 կը բերէր սու կայսրն և առ իշխոզս խալիլոյ : Ասոնց վկայ և Թարգման եղաւ
 Մկրտիչ Պարսկահայ նոր Տնպահ, յաջորդն Գէորգայ : Երկրորդ օրը ուրիշ
 Հայ վաճառական մի Խարիսպիան? (Charispian) որդի Ղազարայ՝ նոյնպէս
 երդմամբ կը վկայէ որ Յակովբ հաւատարիմ և բարի մարդ է, և ինքն տեսեր
 էր զնա Սիմոն իշխանին քով : Ասոր խօսքին ստուգութեանն ալ կը վկայէ
 ուրիշ Հայ մի Զուղայեցի՝ Գէորգ Մէրտար կոչուած, և թէ Յակովբ իրաւ
 քանի մ'ամիս առաջ դացեր էր առ Սիմոն, հետն ալ կար ուրիշ Հայ մի,
 զոր բռնեցին Թուրքք ի Գանձակ, և թղթատար կարծելով կ'ուզէին այրել,
 բայց Զուղայեցի Հայք ստակ տալով՝ ազատեցին : — Յակովբայ գործն յիրաւի զգու-
 շալի և իրեն վտանգաւոր կրնար ըլլալ, զարմանք չէ կասկածելի ըլլալն ալ.
 բայց առանց զարմանքի ալ չէ վենետաց կասկածոտութիւնն այն անձին
 վրայ, որմէ քանի մի տարի առաջ տեղեկութիւններ առին և 50 զովաստ
 վարձք կամ պարգև տուին : Բայց դարձեալ հարկ է որ՝ իրաւ թէ սուս՝ կաս-
 կածանաց տոյժ մի կար, նոյն իսկ Յակովբայ խորհրդաւոր կերպով մի և
 ստեպ այլեայլ արեւելեայ և արեւմտեայ տէրութեանց արքունիք մտնել
 ելնելն : Ինչ առիթ կամ զիպուած էր, չեմ գիտեր, բայց հետեւանք և գլխուն
 եկած փորձանքը կը յայտնէ իրեն հաւատարիմ ընկեր օրհնեալ ժամագիրքն,
 որոյ մէջ այս կարեւոր համարտ և հետաքննական ծանօթութիւնն ալ կ'ա-
 ւելցընէ, ի թուին Հայոց Ռիթմ, որ է 1599—1600ի հոկտեմբեր ամսոց
 միջոց. ուրեմն, 1599 մայիսի մէջ ի վենետիկ գտուելն վերջը. « Ինձ
 » անարժանիս մէկ բերան Աստուած ողորմի ասայ, որ լի եմ մեղօք և տառա-
 » պեայ անձամբ. ես Սկոր էրէցս Համթեցի՝ զայս ըսպասաւորութիւնս (Պատա-
 » ռագի) ի մէջ քանտի՛ն՝ ի Բոսկայ քաղաքն զրեցի » : Խեղճ երէց. նա-
 խանգութեամբ հետն առած նստարական վկայութիւնն ալ բառական չէ եղած
 զինքը պաշտպանելու կարծուած յանցանքէ մի, որ հաւանօրէն անիրաւ կաս-
 կած մ'էր. իր օտար լեզու չգիտնալն ալ՝ կը զօտարացընէր ինք զինքը պաշտ-
 պանելը : Ժամանակն էր Աւստրիոյ կամ Գերմանիոյ կայսեր և Թուրքաց պա-
 տեհագմի. անշուշտ այս գլխաւոր գործոյ մասնաւոր պարագայ կամ զիտելի
 բան մի պատճառ եղած է Յակովբայ բանտարկութեան, որ յուսալի է թէ եր-
 կարտու եղած չըլլայ : Թէ և անկէ վերջ քանի մի տարի անյայտ մնայ
 ինքն ինձի ծանօթ յիշատակաց մէջ :

1605ին վերջերը նորէն յերեւան կ'եղնէ երէցն՝ իր յաճախած քաղաքը, ի վենետիկ. ուր և գրեթէ հաստատ մնաց անկէ ետեւ. վասն զի թէ այն տարւոյն նոյեմբեր ամսոյ 23ին, և թէ յաջորդին սկիզբը (1606 յան. 17, մարտ 6) վենետկաբնակ Հայք՝ որոց 17 կը յիշուին յանուանէ, և որոց 6 Անկիւրացի են, և մէկն ալ սարկաւազ է, Սարգիս. 3 Ամկեցի՝ որոց մէկն Յակոբայ Ժարկաւազն է Կարապետ անուամբ՝ (որ շատ տարի վերջ ալ (1617) յիշուի Հայոց եկեղեցւոյն մէջ), 2 Բաղիշեցի, այլքն Ուռայեցի, Հոմկլայեցի, Սեբաստացի, Զուղայեցի, Կաֆացի, Պոլսեցի. ամէնքն միաբան վկայեցին, (ինչպէս շատ տարի առաջ ուրիշներն), որ Յակոբ Մարգարեան իրենց կաթողիկոսին ընդհանրական վիճարն է, և կ'ընտրեն զինքը այս տեղ իրենց եկեղեցւոյն հոգաբարձու, պատարագիչ և հոգեւոր առաջնորդ, մինչեւ ի մահն, խոստանալով դարմանել զնա. և այս բանիս համար իրեն բաշարձակ իշխանութիւն կու տան, նա եւ ներկայանալու առ Սրբազան Պապն և առ կարդինալս, և խնդրելու շնորհներ իրենց եկեղեցւոյ համար և յօգուտ իրենց հոգւոյն¹։ Այս բանիս վկայ և թարգման եղաւ Բենեդիկտոս ո. Բաղդայ Ստրի փերեզակ մի. — Քանի մ'օր վերջը (16 մարտի, 1606) քանի մի հոգի վերոյիշեալ Հայերէն, հանդերձ Կարապետ սարկաւազով, և զխաւոր սենեակով Զուղայեցի փերեզակ մի, Ղազար Ե. Բովհաննոս, նորէն նօսարին ներկայացուցին իրենց ընտրած հոգեւոր առաջնորդը, իբրեւ իրենց և բոլոր ազգայնոց գործակալ, որ երթայ ի Հոմկլ, խնդրէ Սրբազան Պապէն կամ ի կարդինալաց, Աստուածաշունչ, Աւետարան և ուրիշ Ս. Գրքեր, և բերէ ի վենետիկ, որ օրինակեն և ամենայն հաւատարմութեամբ յետ դարձնեն, և այնպէս կարենան իրենց քրիստոնէական պարտքն ու պաշտօնը կատարել²։

Այս ներկայացման ալ վկայ և թարգման եղաւ վերոյիշեալ Ստրի փերեզակն. — Հայերէն Ս. Գրոց պակասութեան այն ատեն ի վենետիկ՝ վրկայէ հեռուէն բարեպաշտ ազգային մ'ալ, խօսա Շիրիմ Սեբաստացի, որ Աւետարան մի գնեց « ի ձեռաց անարժանից, և եղ յիշատակ իւրն և իւր » ննջեցելոցն. ոչ թէ ի յաշխարհս մեր Անտուղական, այլ ի վենետիկ » Ֆրանկաց տան. զի իմացեալ աստուածասէր այս խօսայ Շիրին, եթէ » կայ անդ քահանայ՝ և ի զոյ տեւտարան, այլ փութով առեալ զուրբ աւ

1 Quodlibet facultatem et auctoritatem ipsi conferendo, comparandi etiam ad pedes Sanct^{mi}. D. Papæ, seu cujuslibet ex Ill^{ms}. et Rev^{ms}. Romanæ Ecclesiæ Cardinalibus, pro impetrando in beneficium ipsius Ecclesiæ quolibet munera, et pro animabus eorum augmento Sanctæ fidei et servitio Divinæ Majestatis.

2. Libros ꝑ . Bibliæ et Evangeliorum, seu alterius sortis Sacræ Scripturæ, donec ipsos in hac urbe exemplari faciant, postmodum restituendo absque ulla contradictione: ad hoc ut possit Natio ipsa instrui in sancta fide, et exercere ea: ad quæ quilibet Christianus tenet et obligatus est.

« ևետարանս և ետ 'ի վաճառականքն, որ առնին ի Բերիայ՝ որ ասի Հալապ, » և անտի երթեալ հասանէ ի մեծահռչակ քաղաքն ի Վենետիկ ։

Քաղաքականօրէն իր ընտրութիւնը հաստատելէն վերջը՝ Տէր Յակովբ եկեղեցական օրինօք ալ հաստատեց . և նախ Հայոց տան մէջ ինչուան պնատեն մատրան տեղ որոշուած սենեակը՝ ուր միայն աղօթք կ'ընէին քահանայ չգտնուելուն, մաքրել տուաւ, խորանը հաստատեց, ժամահարէր զանգակ մ'ալ կախել տուաւ . և Վենետիկոյ պատրիարքին ամոռակալին ձեռօք օրհնել տալով, սկսաւ պատարագ աւ ժամատացութիւն կատարել, նաեւ Սրբութիւն ալ զրաւ ի խորանին . և տարուէ տարի ալ աւելցուց փոքրիկ մատրան հանգէսը, որոյ համար կ'ուզէր զանգակ մ'ալ աւելցնել, որ այնչափ հաճոյ չէր երևէր Տնպահին (Պարսկահայ Մկրտչի) : 1608ին Ս. Խաչի տօնն (Երեման, ի մայիսի) աւելի մեծահանդէս եղաւ . տօնին եկող և աղօթողաց համար Ներսիսեան օրհնութիւն ալ բերել տուեր էր : Հանդիսին համբաւն և զանգակին ձայնն՝ արթնցուցին Հայոց տան վերահսկող քաղքին Ներքին երեք մեծ տեսուչները (Procuratori de Citra), կանչեցին Տնպահը և երկար ու մանր հարցմունքներով տեղեկացան, որ իր տնպահութեան մօտած առտեն (1595) դադարած էր հօն պատարագ մատուցանելն, իսկ երբ երեք տարի առաջ (1605) եկաւ Տէր Յակովբ իր կարօպետ սարկաւազով՝ և վերոյիշեալ բաները կարգաւորեց, սկսաւ ամէն կիրակի պատարագ և ժամատացութիւն կատարել, երբեմն լուր օրեր ալ . իսկ այս Խաչի տօնի պատարագին՝ ոչ միայն Հայք այլ և բազմութիւն քաղաքացեաց եկած էին : — Պաշտօնեայքն մեղադրեցին Տնպահին որ այս բաներս առաջուց իրենց չէր խմացուցած . ինքն ալ ըսաւ որ երբ պատրիարքին ամոռակալն եկաւ օրհնեց ուղղը, ինքն աւտարակցա կարծէր որ իրենց գիտութեամբ է եղածն . այս ալ աւելցուց ըսել, որ ինքն Պարսիկ ըլլալով (յետոյ մկրտեալ) Հայոց լեզուն չէր հասկընար : Այս քննութեանց պատճառն զուշակուի որ կրօնական կասկած մ'ըլլայ, օտարաց բերնով Պաշտօնէից հաղորդուած . բայց Տէր Յակովբայ նախահազութիւնն կամ նախատեսութիւնն՝ ամեն բան կարգով և օրինօք ըրեր էր, որով պաշտօնէից ուրիշ բան չէր մնար՝ բայց զանիկայ իրենցմէ ճարտար և զգոյշ գտնել :

Եթէ այս եկեղեցական և կրօնական պիտոյից համար՝ Յակովբ գացե՞ր է ի Հռովմ, հաւանական է, այլ վկայուած չէ . եթէ զնացեր ալ է, ոչ անմիջապէս յետ ընտրութեանն (1606, մարտի 16), վասն զի ապրիլի 5ին ի Վենետիկ վկայ կ'ըլլայ ինքն ալ նօտարի առջեւ չորս Բաղիշեցի վաճառականաց, որք կը վկայէին Թէ անցեալ տարի սեպտեմբերի մէջ ի Հռովմ վախճանած Պետրոս Լուիսն ալ Բաղիշեցի էր, և ունէր հայր՝ Սիսիան աւտուար, եղբայր մի Սեփեր, և մանր զաւակներ, որոց կ'իսկնար Թողած ստացուածքն : — Նոյն տարին (1606) յուլիս ամսոյ վերջի օրը Մէհմետի որդի Հասան անուամբ Թուրք մի էր . Պօլսի մօտ Քեաֆի? (Chiafi) բերդէն, քրիստոսական կրօնը ընդունելով՝ կը մկրտուի Վենետիկոյ պատրիարքական Ս. Պետրոս կաթողիկէի մէջ . Յակովբ երեցն (որ միշտ յամենայն գիրս նօչ

տարաց և եկեղեցեաց Մեծ Հայոց պատրիարքին Վիքար կոչուի), Հռոմկայացի վանառական Սիմոնի որդոյ Յովսէփայ հետ, կնքահայր կ'ըլլայ. այս ետքիւն ալ Հայոց մէջ նշանաւոր տնտէր հարուստ մէկն էր, և այս թուականէս ինչուան 30 տարի վերջ ալ յիշուի: — Քանի մի տարի վերջ նոյնպիսի գործով կը յիշուի մեր վիքար երէցն, այսինքն կնքահայր ըլլալով ուրիշ չափահասի մի, որ էր ունկարացի տղայ մի 18 տարուան, զոր թուրքք գերի տարեր էին ի Պելլիտտ քաղքէ, և անունը Մուսաֆա դրած. Վասիլ աւանումք Հայ մի քնեց զնա (իր տէրն Մահմէտ կոչուէր), և հիմայ (ի 16 մարտի 1609) մկրտուելով (վասն զի որոյ որդի ըլլալն յայանի չէր) կոչուեցաւ Գէորգ. Յակոբայ ընկեր կնքահայր մ'ալ եղաւ Գէորգ Լմին ո. Կոստանդինի Նաբոլիացոյ:

Այս հոգեւոր հայրութիւններէն զատ ուրիշ բարի գործոյ մ'ալ միջնորդ եղաւ Յակոբ, թէ և խարուցցաւ: Վերոյիշեալ թուականէն երկու տարի վերջ ի Հոռմ էր, (հաւանօրէն յետ 1606ի առաջին անգամն չէր երթալն). հօն էր այն առեն Յովսէփ փափազեան Անկիւրացի մի, որ իր հայրենակից Կիւմիշեան Ալվատի բերած ցփիները առեր էր ծախելու կէս շաշու, ինչպէս դաշնադրած էին ի Կ. պօլիս (1610 սեպտ.) բայց չէր աջողած, և կ'ուզէր իր առանձին ապրանքով վճարել. Տէր Յակոբ տեսաւ որ ի նեղն ընկած է նա, և թէ ընչից թէ անձին վրայ ձեռք պիտի դնեն, առաջարկեց որ զայ ի վենետիկ և ինքն միջնորդ ըլլայ Ալվատին հետ գործը վճարելու: Յովսէփ ուրախութեամբ յանձն առաւ, այլ ապահովութեան զիր ուզեց յԱլվատայ, և երբ առաւ՝ եկաւ ի վենետիկ, ուր արդէն դարձեր էր մեր երէցն ալ: Երկու վանառակիցքն դաշնադրեցան ուրիշ Հայոց առջեւ, որ նախ Յովսէփ վճարէ Ալվատայ 100 դուկատ և 50 դուկատ արծող մուշտակ մ'ալ. մնացած պարտքն ալ 300 կամ 350 դուկատ՝ վճարէ տարուէ տարի 50 դուկատ: այս բանին երաշխաւոր եղաւ Սիմոն ո. Խաչատրոյ. բայց աւելի ապահովութեան համար խոստացաւ Յովսէփ՝ որ իր աղջիկն ալ տայ ի կնութիւն Ալվատի մէկ որդոյն: Սակայն քանի մ'օր վերջը (մայիս ամսոյ 14, 1611) Ալվատ բռնել տուաւ զՅովսէփ՝ և բանտել Օսարականաց Պաշտօնարանի (Officio de Forrestier) բանտը: ի վենետիկ օսկորական էր պարտականները բանտելը. բայց այսպէս խորդախ պարտատիրոջ գէմ բողոքեց պարտականն առ դատաւորս, ցուցնելով որ՝ նախ, ինքն վատահացեալ Ալվատի գրութեանց, ի ձեռն Տէր Յակոբայ Խոստովանօր Հայոց, եկաւ ի վենետիկ. բ. որ 300 դուկատի պարտական էր, իսկ Ալվատ 350 կը պահանջէր. գ. և գ. որ Ալվատ ոչ միայն հաւաներ էր վերոյիշեալ պայմանաց իրաւախոհութեան, այլ և երբ դուրս ելան սենեկէն՝ բարեկամութեամբ ձեռք տուաւ: — Այս գատին ինչպէս վերջանալն չեմ գիտեր, հաւանիմ թէ մեր բարեսէր Տէր Յակոբն բարեսրտութեամբ աշխատած և ազատած ըլլայ իր խորհրդով Հոռմէն ի վենետիկ եկածը:

Տէր Յակոբայ վերջին ծառիք յիշատակն ի Դիւանա՝ է վկայ ըլլալն (ի 28 յունիսի նոյն 1611 տարւոյն) առաջի նոտարի, որ Մարկոս ո. Գէորգայ Բա

դիւնցի իր գործակալին (Սիմոն Բ. Յովսէփայ) իշխանութիւն կու տայ, որ երբ իր 200 զուկատ պահանջն ընդունի, 10 զուկատ տայ Հայոց եկեղեցւոյն, 10 զուկատ ալ Գեորգայ Բ. Յովհաննէոս վաճառականին : — Վերջնազոյն յիշատակն ալ շուտով հասած է, հազիւ 17 օր ետեւ այսինքն յուլիս 15ին. շաբաթ մի ջերմով և արեան վերքերով թեամբ հիւանդացեալ վախճանքեր է Տէր Յակովբ, 55 տարուան : Մահազիրքն Ս. Յովհաննոս թաղի, (որոյ մէջ է Հայոց տունն և եկեղեցին), միայն Պատուելի Հ. Յակոբ Հայն կ'ըսէ, առանց մականունան և պատուանունան, բայց բնակութեան տեղէն և այնուհետեւ իր անուան լռելէն յայտ է՝ որ ինքն Մարգարեանն է, կաթողիկոսի ղիքարն, արժանաւոր լաւագոյն ծանօթութեան և պատուոյ, նկատմամբ վիճեաաց և օտարաց՝ իրեն աշխատալի նուիրակութեանց և ճամբորդութեանց համար. նկատմամբ ազգիս՝ այն քաղքին Հայոց և իրենց եկեղեցւոյն վրայ տարած խնամոց համար, մանաւանդ որ ինքն է խռալին եղած անոնց հաստատուն հողաբարձու և խոստովանահայր, ինչպէս իրենց ալ կը վկայեն : Շատ տարի վերջը (1629) բարեզգած մէկ մի մեր երիցու ձեռագիր ժամագրոց մէջ գրեւ է. « Աստուած ողորմի հոգուն Տէր Ակոբին. ամէն. Հայր մեր » . որով կ'իմացուի որ զեռ կային զինքը սիրով յիշողք և յարգողք. որպէս հաւանիմ թէ ըլլան և մեր ընթերցողք, և յուսամ թէ ժամանակն յայտնէ նոր յիշատակներ այսպիսի անձին :

ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ՌԵՍՈՒՄՆ

ՅԵՆՐԱՊԱ

(Տես հատ. Ծ. յէջ 525)

ՊԱՂՂԻԱՅԻ հայագիտաց վրայ մեր տուած տեղեկութիւններն գրեթէ լմնալու վրայ են : Ընթերցողք նոյն համառօտութեան մէջ ալ նկատեցին՝ որ քաջալերութիւնն երբեք չպակեցաւ : Երնայինք ասոնց թուոյն մէջ յիշատակել ուրիշ նշանաւոր անձինք ալ որ հայկական մատենագրութեան Եւրոպիոյ մաստուցած կարեւոր երկասիրութեանց լուրջ քննադատութեամբք զբաղեցան . օրինակ իմն, իմաստուն հնարօսն Տէգիրէ Ռաուլ Սոլէզ (1789—1854), բազմահոյակ արեւելապէտն Սիլվեստր Տըսստի (1758—1838), Յովսէփ Թուսէն Ռէինոյ (1795—1867), ուսուցիչ արաբականին ի Գպրոցն. Գաղղիոյ, որոյ ջանից և խրախուսանաց կը պարտինք Պետրոսեանց երիցու պատմութեան թարգմանութիւնն ի գաղղիական՝ ձեռամբ Շահնազարեան Կարապետ վարդապետի. եզիպտագէտն է. Մարք Գաթրիմէր (1782—1857), որոյ հայկական մէկ բառգիրքը կը պահուի յԱզգային Մատենադարանին փարիզու. Ժ. Պար-